տերիտորիաներն ամբողջովին։ Ստվեղծվեց ամբողջական Զավնդուրի մահալը, որի մեջ մտավ նաև Աճանան-Թուրքի մի մասը։ Տաթևի ընդարձակ մահալից նրա արևելյան հատվածը Գորիս կենտրոնով առանձնացվեց որպես Զանգեզուրի մահալ։

Երկրի պաշտպանության պարտականությունը վերցված էր մահալական մելիքների վրայից։ Դա վաղուց անցած էր պետական կանոնավոր զորքին։ Հասկանալի է, թե ինչու մելիքներն արդեն նախկին եռանդով չէին զբաղվում որսորդությամբ և այդ միջոցով իրենց ռազմական վարժությունը կրթում և բարձրացնում։ Հենց այդ էր պատճառը, թե ինչու, օրինակ՝ Մելիք-Թանգի Բ-ն «սովորաբար որսի չէր գնում» և ոչ թե, ինչպես բացատրում է Ե. Լալայանը[2], որովհետև «որսորդության համար հարմար տեղեր չկային»։ Մելիքական իշխանությունը ստացել էր զուտ քաղաքացիական բնույթ։ Բեռնաթափվելով ռազմական պարտականություններից՝ մահալական մելիքները կարողանում էին ավելի էֆեկտիվ կերպով հանդես գալ երկրում խաղաղության պահպանողի, պետական եկամուտներ բաշխողի և հավաքողի, հողային և անհատական վեճերի դատավորի դերում, ավելի օգտագործելով և իրենց պատժական հնարավորությունները։ Այդ ֆունկցիաները կատարելու համար նրանց վերապահված էին նախկին եկամուտներից շատերը։ Այդ եկամուտների տեսակների և չափերի մասին հետաքրքրական տեղեկություններ կարողացել էր իր ժամանակ հավաքել ծերունիներից Խնձորեսկի երկդասյան դպրոցի ուսուցիչ Ն. Շիրակունին[3]։

Մելիքները ստանում էին՝

1. Տասանորդ հացահատիկից և խոտից։

2. Ամեն ծուխից մի-մի բանվոր մելիքի արտերը և խոտհարքը հնձելու և խոտը հավաքելու համար։

3. Մի-մի բեռ փայտ, որը պետք է բերվեր սեփական ձիով և ջորիով։

4. Ամեն երեք ընտանիքից՝ մի գութան մելիքի հողերից մի օրավար վարելու համար։

5. Գյուղական հասարակությունից՝ մեկ տարով վարձած ձիապան, խոհարար, ծառա և աղախին։

6. Կանայք պիտի գնային մելիքի բուրդը լվանալու, գզելու և մանելու, ինչպես և նրա այգիներից միրգը հավաքելու։

7. Նավասարդին՝ Նոր տարուն ամեն տան մեծը մի խնձորի մեջ արծաթ, երբեմն էլ ոսկի դրամ ցցած շնորհավորում էր մելիքի տոնը, բերելով և մի կուլա գինի և մի շիշ օղի։

8. Հարսանիքի նախօրյակին նորափեսայի հայրը խավորի հետ տանում էր մի կուժ գինի, մի շիշ օղի, եղան սուկին և պլոճիկները մելիքից հարսանիքի թույլտվությունը ստանալու համար[4]։

---

[2] Լալայեան Ե., *Սիսիան*, էջ 22։

[3] «Зангезурский уезд» СМОМПК, вып. XXXIV, отд. 1, էջ 203։

Այս հատվածից ընչին փոփոխություններով օգտվել է Ե. Լալայեանը առանց աղբյուրը նշելու, *Սիսիան*, էջ 22։

[4] Նման բնույթի նվերներ մինչև վերջին ժամանակներս ստանում էին նաև գյուղի խոխանները։ Ըստ Շիրակունու վկայության, Խնձորեսկ գյուղի տանուտէրը Նոր տարվա առիթով նվեր հավաքեց մոտ 10 փութ խնձոր և նուռ, 123 ռ. արծաթ փող և յոթ դույլ գինի և օղի։